№ 135 Շաբաթ Նոյեմբերի 29 1886 Շաբաթ Նոյեմբերի 29 № 135

ՏԱՍՆ ԵՒ ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 բուբլի, կէս տարվանը 6 բուբլի։
Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
Կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Ցայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով։

Ցայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ԱՌԱՋԻԿԱՑ **1887** ԹԻՒՆ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով։ Մենք կը ստանանք սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 բուբլի է, վեց ամսվանը 6 բուբլի։

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարօնակայա և Բազարնայա փողոցների անկիւնում, թամամչեվի տանը։)

Կայսերութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Բարեգործական ընկերութիւնը ինչ կերպարանք պէտք է ընդունէր.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մեր գինեգործութեան մասին. Անդրկովկասեան ցորենի առևտուրը. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գերմանական բայիստագը և դահլան ճառը. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Թիւրքիայից.

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ԻՆՉ ԿԵՐՊԱՐԱՆՔ ՊԷՏՔԷ ԸՆԴՈՒՆԷՐ

—

Վաղը, կիրակի օր, կայանալու է կովկասեան Հայոց "Բարեգործական ընկերութեան" ընդհանուր ժողովի նիստը։

Չէ կարելի չը խոստովանվել որ հասարակութիւնը շատ սառն է վերաբերվում դէպի այդ ընկերութիւնը և ընկերութեան ընդհանուր ժողովներին, առհասարակ, շատ քիչ ժողովուրդ է լինում։ Ցայտնի է որ այդ ընկերութեան անդամների թիւը, նրա հիմնվելու օրից, հետզհետէ պակասում է։

Ի՞նչ է դրա պատճառը։ Ոմանք մեղադրում են միմիայն հասարակութեանը, հաւատացնելով որ ընկերութեան վարչութիւնը իր պարտաւորութիւնները սրբութեամբ է կատարում, ոչ թէ միայն իր կարողութեան չափ, այլ նոյն իսկ իր ոյժերից վեր գործեր է կատարում հայոց հասարակութեան համար, միայն թէ մենք ենք որ չենք գնահատում նրա գործունէութիւնը, չենք պահպանում նրան.....

Այդ մեղադրանքը հասարակութեան դէմ, որ մենք առիթ ունեցանք ներկայ տարվայ ընթացքում կարդալ մեր պարբերական թերթերի մէջ, գուցէ մասամբ և արդար է, բայց մենք մեր կողմից, ինչպէս և յայտնի է մեր ընթերցողներին, երբէք կատարելապէս համաձայն չենք եղել այդ կարծիքի հետ։

Մենք գուցէ սխալվում ենք, բայց մեր խորին համոզմունքն է որ ոչ մի հասարակական հաստատութիւն չէ կարող ընկնել հասարակաց աչքից, եթէ այդ հաստատութիւնը անընդհատ ցոյց կը տայ հասարակութեանը իր գործունէութեան շօշափելի արդիւնքները. հասարակութիւնը, որքան և անզարգացած ու փոփոխամիտ լինէր նա, երբէք չի սառչի դէպի մի հաստատութիւն, եթէ այդ հաստատութիւնը տարիների ընթացքում կը պահպանվի արդիւնաւոր գործունէութեան մի յայտնի մակերևոյթի վրա։

Այն էլ չէ կարելի ուրանալ, որ հայը միշտ աւելի շատ է պահանջում իր բոլոր գործիչներից, քան թէ նրանք կարող են անել. ամեն անհատից և հաստատութիւնից, որոնք հասարակութեան մէջ գործում են, հայերը սովորութիւն ունեն նրանց ոյժից վեր բաներ պահանջելու։ Հային յատկանիշ է միշտ հրաշք պահանջել իր բոլոր գործիչներից, իսկ եթէ նրանք շնորհ չունեն հրաշք գործելու, այն ժամանակ հայը սկսում է հերքել իր գործիչների մէջ ամեն տեսակ արժանաւորութիւն։

Այժմ ինքն ըստ ինքեան հարց է զարթնում. ինչ պէտք է անի մեր բարեգործական ընկերութիւնը, ինչ կերպարանք պէտք է ընդունի նա, որպէս զի հայ հասարակութիւնը գոհ լինի նրանից, գնահատի նրա գործունէութեան արդիւնքները, սառը կերպով չը վերաբերվի դէպի այդ ընկերութիւնը, օրից օր շատացնելով ընկերութեան անդամների թիւը։

Մենք կարծում ենք որ այդ նպատակին հասնելու համար բարեգործական ընկերութիւնը չը պէտք է բաւականանայ միմիայն մի քանի ուսանողներին յայտնի թոշակ տալով, այլ պէտք է մի հասարակական յարատև հաստատութեան հիմնադիր դառնայ և պահպանի ու հովանաւորի այդ տեսակ հաստատութիւն։ Ամեն ժողովրդին, բայց մանաւանդ մեր ժողովրդին, մի ընկերութիւն, որ ուզում է այդ ժողովրդի ոգեւորված համակրութիւնը յարատև կերպով վայելել, պէտք է իր գործունէութեան շօշափելի արդիւնքները ցոյց տայ։

Մի բարեգործական ընկերութիւն, որ կամենում է իր կոչման բարձրութեան վրա կանգնել, պէտք է՝ կամ կապի իր գոյութեան հետ հասարակութեան սերը, հիմնելով և պահպանելով նոյն ժողովրդի մէջ յարատև մի հաստատութիւն, նայելով ժողովրդի պահանջներին,—մի անկելանոց, մի հիւանդանոց, մի էժան ճաշարան, մի ապաստարան, մի խնայողական մնդուկ՝ մշակ, արհեստաւոր, չքաւոր, աշխատող դասակարգի համար, կամ եթէ ուզում է միայն ընթացող երևոյթներին, ընթացող կարիքներին օգնութեան ձեռքը մեկնել, պէտք է այնքան ոյժ, այնքան նիւթական միջոցներ, այնքան եռանդ ունենայ, որ անմիջապէս օգնութիւն հասցնի այն ամեն խոշոր աղէտներին, որոնք պատահում են հասարակութեան մէջ։

Մի հրդեհ է պատահում, դիցուք, 5000 մարդ առանց ապաստանի են մնում, դիմում են հասարակութեանը օգնութիւն խնդրելով.... ո՞վ պէտք է օգնի նրանց՝ կամ անմիջապէս մի գումար տալով, կամ ձեռնամուխ լինելով, իր վրա ինիցիատիվ առնելով՝ հասարակութեան մէջ հանգանակութիւնն անելու, պարահանդէս, ներկայացում, կոնցէրտ սարքելու,—ակամայ ասում էք՝ բարեգործական ընկերութիւնը....

Բայց արդեօք անո՞ւմ է այդ մեր ընկերութիւնը և կարո՞ղ է անել,—ոչ։

Ուրեմն՝ մի որ և է, այն էլ կենտրոնական Հայոց կովկասեան բարեգործական ընկերութիւնից պէտք էր սպասել շօշափելի արդիւնք՝ յարատև, մշտական հաստատութեան ձևով, կամ պէտք էր սպասել որ նա միշտ պատրաստութիւն, կարողութիւն, ոյժ և եռանդ ունենար օգնութիւն հասցնել գոնէ արտակարգ ընթացող հասարակական աղէտներին։

Բայց երբ որ ոչ մէկը և ոչ միւսը չը կայ, այլ այդ տեսակ ընկերութեան ամբողջ գործունէութիւնը, նրա ամբողջ raison d'être պայմանաւորվում է մի քանի անհատ աղքատներին մի քանի ռուբլի տալով, կամ մի քանի ուսանողներին, այն էլ ոչ կատարեալ թոշակ տալով,—այն ժամանակ ներելի է որ հասարակութեան աչքում այդ տեսակ ընկերութիւն շատ էլ մեծ հեղինակութիւն չունենայ, և թէև ցաւալի, բայց մասամբ բնական է, որ ժողովուրդը կը սկսի հետզհետէ մոռանալ այդքան աննշան արդիւնք ցոյց տուող ընկերութեան գոյութեան մասին անգամ։

Գ. Ա.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

—

Կ. Պոլիս, 18 Նոյեմբերի

—Ընտրեցիր.
—Ընտրեցի.
—Հրաժար.
—Մահ.

Ալֆիէռի ողբերգութիւններէն միոյն մէկ տեսարան յիշեցի երբ այս օրերս տարածուեցաւ այն լուրն թէ՝ Վանայի մշտավառ հայ ընկերութիւնը վերջնագիր մը ուղղած է առ Նուրեան էֆէնտի, ատենապետ քաղաքական ժողովոյ, սպառնալով նմա կամ մահն ընտրել կամ հրաժարիլ ազգային պաշտօնէ։ Վերջնագիրն ամէն պաշտօնական վաւերացում ունի իւր վրայ և կնքեալ է խոշոր կնքով մը։ Ցասն և հինգ օր պայմանաժամ շնորհուած է Նուրեան էֆէնտի. ի լրանալ պայմանաժամին ցանձնաժողովը հարկ եղած միջոցները ձեռք պիտի առնու։ Առ ինչ։—Չենք գիտեր։ Ցասն և հինգ օրը կը լրանայ վաղը և Նուրեան էֆէնտի պիտի կը կենայ իւր տեղը։ Իբր արի զինուոր նա լաւագոյն կը համարի անկանել պատերազմի դաշտին վրայ քան դասալիկ լինել։ Եւ սակայն դեռ չը լսեցինք գնտակներու սուլելն և հաւանօրէն չենք լսեր բնաւ։

Անշարժ, աներկիւղ է նաև Ցարութիւն Պատրիարքը, որոյ դէմ նաև չանթեր տեղացին Վանայէն։

Ինչպէս կը տեսնենք մեր ղեկավարները թուլամորթ անձինք չեն և առանց ահաբեկ լինելու սպառնալիքներէ կան և մնան ուր որ են։

—

Եւ եթէ մեկնեն պիտի գտնուինք մենք բաւական դժուար կացութեան մէջ վասն զի արդէն ունինք բաւական խառնակ գործեր։ Այն գործերէն են որք որչափ պարզուին այնքան աւելի կը կնճռոտին։ Դժուար պիտի լինի Նորեկներու ստանձնել այնքան ծանր բեռներ։ Զը յիշենք Երուսաղէմի սուրբ պարտուց խնդիրն որ միշտ «յաւել զմեղս ի վերայ մեղայ» կը լինի, այլ գանք աւելի թարմ հարցերու։ Պարագլուխն է այդ հարցերու Մուշի առաջնորդ Ալէքսանդրեան Գրիգորիս եպիսկոպոսի հարցը։ Որչափ պարզ, այնքան բարդ հարց։ Ժողովրդի իրաւունք, Սահմանադրութեան ոգի, բարւոք վարչութիւն, ազգային առանձնաշնորհմունք, պետական հարկ ամէն ինչ իրարու մէջ անցած է։

Պատրիարքարանն հրամայեց Մուշի Առաջնորդին եկնել և երթալ ի Վան շնորհքն... սատանայի։ Եւ Պատրիարքարանը շատ պիտի չփոթէր ուրիշ կերպ ընելու համար։ Ցանդուգն այդ Ալէքսանդրեանն որ ոչ թէ երկու անգամ կը մտածէ և մի անգամ կը գործէ, այլ կը գործէ աւելորդ համարելով մի անգամ իսկ մտածելն։ Այդ եպիսկոպոսը նոր վերադարձաւ իւր աթոռը, յետ երկար դժուարութեանց. բայց արիւնը կ'եռայ։ Գաղափար մը տալու համար փոքր պատմութիւն մը ընեմ։ Երբ Պոլիս էր Ալէքսանդրեան եպիսկոպոսը իբր քարոզիչ խրկուած էր Իսկիդարու ս. Խաչ եկեղեցին։ Գիշեր մը հրդեհ կը ծագի թաղին մէջ և կ'սկսին այրել Հայոց տուներն։ Կը լեցուին զինուորներ, ջրհանակիրներ, տէրութեան պաշտօնեայներ, հարիւրապետներ, հազարապետներ, որ մէկն ըսենք։ Զինուորական պաշտօնեայները կը նշմարեն հուրին, բոցին ծուխին, մուխին մէջ, մի հսկայատիպ անձ որ հրամաններ կուտայ, տուներուն վրայ կը մագլցի, կրակոտ փայտերը վար կառնու, և որ աւելին է տուներ քակելու հրամաններ կուտայ։ Այդ անձն իրենց անծանօթ է, և ձերբակալելու հրաման իսկ տալու կ'ելնեն։ Միջոց մը այդ դժոխատիպ դիմաք անձը կուգայ այն տան մէջ ուր նստած է զինուորական առաջին հրամանատարը։ Սա անմիջապէս ընդառաջ կերթայ տարօրինակ «ջրհանակրին» և կը հարցնէ թէ ո՞վ է նա.

—Այս տեղի Հայերուն Առաջնորդն ու հովիւն եմ կը պատասխանէ։

Այս պատասխանին վրայ թիւրք հրամանատարը զարմացած կը մնայ, տեսնելով նորա այրած դէմքը, պատռատած զգեստները և այն վտանգները որոց մէջ նետուած է իւր ժողովուրդին տունը տեղը փրկելու համար։ Մահմետական զօրապետը խորին յարգանք ու մեծարանք կընծայէ քրիստոնեայ հովիւին։

Այս անձն է ահա որ իրար կանցնէ Մուշը։ Անգամ մը աչքերնուդ առաջ բերէք կրակին մէջ վազող եպիսկոպոսը և փոխադրուեցէք ի Մուշ։ Գիշեր մէջ. «Ցօն, տօն, տօն» խորին կերպով կը հնչեն, տխրագոյն զօրանշներով Հայոց եկեղեցիներու զանգակները։ Ժողովուրդը ամէն կողմէ կը լեցուի խուռներամ այն եկեղեցին ուր է առաջնորդը։ Գրիգորիս եպիսկոպոս բեմին վրայ կանգնած է քաջաբար, հրացայտ աչքերով։ Բայց նա մի նոր Մելիք-Ատան չէ որ ուզէ կրկնել 1733-ի Գանձակի և Ղարաբաղի կոտորածի գիշերն։ Նա հրաւէր չը կարդար Ջարդի համար, բայց խաղաղական միջոցներով կուզէ հասնել իւր նպատակին։ Ցորդոր կը կարդայ իւր ժողովուրդին զոցել յաջորդ օրը իրենց խանութները, փակ պահել պաղար ու շուկայ, չընել առևտուր մինչև որ Մուշի կառավարիչ փաշան հեռանայ անտի, և հայերը «ուխտեցին ոչ ուտել և ոչ ըմպել մինչև ելցէ փաշան»։ Երևակայեցէք թրքաց յաջորդ առուր ապշութիւնը փակ տեսնելով ամէն խանութներ։ Այդ տարօրինակ գործադուլը—դրէվը—տակն ու վրայ կընէ քաղաքը։ Կառավարիչ բաշան սրտմտած զայրացած անմիջապէս Պոլիս կը հեռագրէ Սատրազամին։ Նախարարութիւնը Պատրիարքին լուր կուտայ թէ ինչ է այս եղելութիւնը։ Խեղճ Պատրիարքը չուարած կը մնայ. ինչ ընէ, ինչ պատասխան տայ։ Ինչ որ ալ լինի պէտք է խոստովանել որ ցոյցը մեծ է։ Սատրազամը կը պահանջէ որ այդ ըմբոստ եպիսկոպոսը անպատճառ Պոլիս բերուի. Պատրիարքը կը դիմադրէ. կը յայտարարէ թէ՝ Մուշի կառավարիչ բաշան ալ ժողովուրդը կը նեղէ և թէ պէտք է որ նա ևս անտի հեռանայ. թէ՝ Գրիգորիս եպիսկոպոս Տէրութեան դէմ ոչինչ ըրած է, և այլն և այլն։—Ի հարկէ այս միջոցիս Պոլսէն ստիպողական հրամաններ կերթան որ խանութները բացուին։—Ուր ուրեմն կը յանդին սա համաձայնութեան որ Գրիգորիս եպիսկոպոս «առ ժամանակեայ կերպով» Վան երթայ իբր Առաջնորդական տեղապահ մինչև որ ընտրուի նոր Առաջնորդը։

Այս որոշման դէմ կը բողոքեն հեռագրաւ Մուշայ եկեղեցականք և աշխարհականք, բայց Պատրիարքարանը կը պատասխանէ «հարկը օրէնքը կը լուծէ»։—Հաւանական է որ քիչ ժամանակէն ուրիշ կառավարիչ մը ընտրուի Մուշի համար։ Իսկ Գրիգորիս եպիսկոպոս Ալէքսանդրեանի համար որքան ալ որ կըսուի թէ առ ժամանակեայ կերպով հեռացուած է Մուշէն, բայց կարծեմ թէ վերջնական է։ Նորա յաջորդին համար Պատրիարքարանը կը մտածէ Տրապիզոնի առաջնորդ Սրուան-

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

—

Դուք տալով ձեր թերթին այն ուղղութիւնը, որը խօսում է անդադար ժողովրդի առօրեայ կեանքի բարւոքման միջոցների մասին, մի ուղղութիւն, որ ամեն մի զգայուն մարդու սրտի մէջ գտնում է կենդանի արձագանք և խորին համակրութիւն, յոյս ունեմ որ տեղ կը չնորհէք այս իմ մի քանի խօսքերիս, որոնք վերաբերվում են Գանձակի գինեգործական ընկերութեանը, որին չեմ կարող իմ համակրութիւնս ցոյց չը տալ, քանի որ մասնագիտաբար ուսումնասիրել եմ թէ խաղողները և թէ գինիները:

Մեր երկրի արդիւնաբերութիւնների մէջ գինին բաւական մեծ դեր պէտք է խաղայ և նրա ապագան մեզ խոստանում է փայլուն զարգացում, միայն ցաւելով պէտք է ասել, որ պատրաստված գինիների մի մասը ոչնչանում է նոյն իսկ իր գոյութիւն արած տեղերում, իսկ մի մասը սպառվում է, արտահանվելով դէպի Ռուսաստան շատ քիչերի ձեռքով:—Մինչև այժմ սպեցիալապէս գինու պատրաստելուն կամ նրա կանոնաւոր արտահանելու վրա ուշադրութիւն դարձնող այնքան քիչ է եղած, որ այդ բերքը արտահանողներին, կամ այսպէս ասել, գինեվաճառներին և գինեգործական ընկերութիւնները կարելի է մի առ մի մատնացոյց անել: Եւ այդ մի քանի իբր սպեցիալիստները կամ գինու նեգոցիանտները, առնելով արդէն պատրաստի գինիների վաճառման գործը իրանց ձեռքը, անխնայաբար չփոթում են իրանց ծախած գինիների անունները, որպէս զի մեր գինետէրերը չը ծանօթանան Ռուսաստանի կամ արտասահմանի գինեգործարանատէրերի հետ և թէ մանաւանդ վերջինները առաջինների հետ,—դորանով այդ մի քանի անձերը և ընկերութիւնները գինեվաճառման մի տեսակ մոնոպոլիա են ստեղծել իրանց շահերը պաշտպանելու համար: Եւ ահա այսօր եթէ դրանք լսում են որ մի որ և է գինեգործական ընկերութիւն է կազմվում, սարսափում են և սկսում են ամեն կերպ աշխատել խանգարելու այդ ընկերութեան գոյանալուն, այն տեղերում, որտեղ թէ իրանց դիրքով և թէ մասամբ իրանց ճարպիկութեան շնորհով ունեն շատ թէ քիչ հեղինակութիւն: Խօսքս վերաբերվում է զլխաւորապէս Գանձակի մէջ գոյացող գինեգործական ընկերութեանը, որ ներկայացրել է իր նախագիծը Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեանը քննելու, այն ինչ ես լսում եմ այդ գինեգործական ընկերութիւնը մասնակցողների մի քանիսից, որ կան մի քանի անձեր, որոնք դուշակելով այդ լոկ ընկերութեան կազմակերպվելուց վտանգ իրանց շահերի, աշխատում են նրա քայքայվելու մասին, նոյն իսկ Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան առաջ:

Գանձակը գինիների մեծ քանակութեամբ մեզ ներկայացնում է երկրորդ Բորդո. եթէ այնտեղի գինիները մշակվեն մասնագիտաբար, ինչպէս և դրել է իրան նպատակ այդ նոր ընկերութիւնը, այն ժամանակ Կովկասի ոչ մի գինին չէ կարող մրցել Գանձակի կարմիր գինիների դէմ: Դրժբաղդաբար մինչև այժմ Գանձակում չեն կարողացել գինու պատրաստելու եղանակը ըմբռնել և այդ արուեստի մէջ գանձակեցիք կարող են կախէթեցիներից աւելի տգէտ համարվել, թէպէտ գանձակեցիները կարելի է ասել Կովկասի մէջ առաջին տեղն են բռնում վաղների մշակութեան մէջ: Բայց երբ այդ ընկերութեան կազմակերպվելը կիրագործվի, այն ժամանակ Գանձակի գինու արժանաւորութիւնը ևս կը բարձրանայ, մանաւանդ եթէ այդ ընկերութեան մէջ մասնակցողները կը լինեն նոյն իսկ Գանձակի այգետէրերը. այդ պահանջում է նորանց անձնական ինտերեսը և ամեն մի գանձակեցի այգետէրը պարտաւոր է մասնակցելու այդ ընկերութեանը: Որովհետև Գանձակի գինիները առհասարակ լինելով վատ պատրաստված, չեն կարողանում մի տարի դիմանալ, իսկ դիմացող գինին այնքան քիչ է լինում, որ խօսել անգամ սորա մասին չարժէ,—այդ իրողութիւնը աչքի առաջ ունենալով, ամեն մի գանձակեցին չուտափոյթ ծախում է իր գինին, չուզենալով մանաւանդ գինի պահելու յարմար տեղ: Այդպիսով նա զրկվում է իր տարեկան եկամուտից, մանաւանդ երբ խորամանկ գինեվաճառը գիտէ խեղճ այգետիրոջ անելանելի դրութիւնը և դալալների միջոցով կարողանում է միշտ բաւական արժան գնով ձեռք բերել գանձակեցու գինին: Բայց երբ գանձակեցիները, կազմելով մի ընկերութիւն միացեալ այժերով կը կատարելագործեն գինեգործութիւնը, այնուհետև նորանք ապահով կերպով տարիներով կարող են սպասել և պահել իրանց գինիները մինչև որ այն գնով ծախեն իրանց բերքը, ինչ գնով որ ցանկանում են: Եւ ահա հաղիւ այսօր մեր հայերի մէջ դարթնեց լոկ ընկերական ոգին, հաղիւ գանձակեցիները զգացին իրանց կորուստները: Գինի պատրաստելուց յետոյ նրանք առհասարակ անհամբեր սպասում են որ մի շիրաջի կամ մի ընկերութեան որ և է կործակատարը գնալով այնտեղ, չուտ առնէ, հեռացնէ նրանցից գինիները, որ ամառը գալով չը ՀԷասէ իր տաքութեամբ նրանց թոյլ պատրաստած գինիներին: Այժմ հաղիւ նրանք կամեցան այդ չարչիներից ազատվել և ունեցան մի գովելի մտադրութիւն, այն է կազմելով գինեգործական ընկերութիւնը, կը կարողանան արտահանել իրանց պարտէզների բերքը իրանց սեփական ձեռքով թէ դէպի Ռուսաստան և թէ դէպի արտասահման,—և յանկարծ այսօր գտնվում են մի քանի անձեր, որոնք ծածկաբար աշխատում են քանդել այդ ընկերութեան դեռ ևս նոր գոյութիւն առնող հիմքը, որովհետև տեսնում են իրանց էկսպլոատացիան ոչնչացած այնուհետև Գանձակի մէջ:

Այդ ընկերութեան ինսպեկտորներին մնում է գործ դնել իրանց ամբողջ ոյժը նպատակին հասնելու համար և եթէ նրանք չը գտնեն համակրութիւն կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան կողմից, այն ժամանակ այդ իրանց ընկերութեանը օրինական մի ձև տան, միայն թէ այդ օգտակար և գովելի դիտաւորութիւնը չը բաց թողնեն և դորանով չենթարկեն իրանց երկրի բերքը շիրաջիների և մի քանի, իբր գինեգործների, կամայականութեանը, որոնք գնելով Գանձակի գինիները տանում և ծախում են ուրիշ տեղերում, Կախէթի գինու անուան տակ: Իմ սեփական երկարատև փորձերը ինձ ապացուցին, որ Գանձակում գտնվում է շատ այնպիսի գինի, որը ուղղակի իր առանձնայատկութիւններով կարող է մրցել Կախէթի գինիների հետ: Թիֆլիսից սկսած ամբողջ Ռուսաստանը լի է Գանձակի սքանչելի կարմիր գինիներով, բայց խեղճ Գանձակի անունը մնում է մինչև այսօր անյայտ: Նոյն իսկ Մոսկվայի և Ռուսաստանի միւս քաղաքների գինեվաճառները գնելով մեր վաճառականներից Գանձակի գինիները գործ եր ածում նրանց, համոզված լինելով որ այդ Կախէթի գինիներն են: Եւ ինչու իրանք գանձակեցիները չը պէտք է կարողանան հանել իրանց գինիների անունը և ցոյց տալ որ Գանձակը ևս ունի մի որոշ տեղ մի քանի յայտնի գինեգործական երկիրների թւում: Արտասահմանի գինեգործարանատէրերը, ինչպէս արդէն տեսնում ենք, մեծ ուշադրութիւն են դարձնում մեր գինիների վրա: Մի քանի անգամ ինձանից ևս գերմանական հարուստ գինեվաճառները պահանջել են այն տեսակ գինի, ինչպիսին է Գանձակի գինին, բայց ես չեմ կարողացել նրանց մեծ պահանջները կատարել, որովհետև այդպիսի գործին հարկաւոր է մի այնպիսի ընկերութիւն, ինչպիսին այժմ կազմվում է Գանձակում:

Այդ գինու պահանջելու նպատակն էր Գերմանիայի վաճառականների կողմից՝ խառնել իրանց գինիների հետ զլխաւորապէս դոյն աւելացնելու համար, որով շատ հարուստ է Գանձակի գինին, եթէ լինի նա պատրաստված կանոնաւոր ձևերով:

Եւրոպայի շատ քաղաքների գինեպահեստներում և գործարաններում ընդունված է առհասարակ թէ սպիտակ և թէ կարմիր գինիները խառնել միմեանց հետ, որով ստացվում է մի այնպիսի նոր գինի, որի մէջ գտնվում են գինու հարկաւոր նիւթերը, որոնք բացակայ են լինում երկու ոչ խառնված գինիների մէջ: Առհասարակ Գերմանիան հարուստ չէ այն տեսակ սև խաղողներով, որոնցով Գանձակը լի է և Գերմանիան մեծ ուրախութեամբ կընդունի Գանձակի կարմիր գինիները ոչ թէ իբրև գինի, այլ իբրև դեղ իր գինիների համար: Եւ այն գինեգործը առհասարակ արտասահմանում, որը երբէք իրան չէ թոյլ տալիս զանազան վնասակար դոյներով ներկել իր գինիները, միշտ պահանջ ունի աւելի մոդ գինիների, դորա համար և դիմում է այնտեղ, որտեղ կայ շատ մոդ գինի: Եւրոպան չը բաւականանալով իր տեղական գինիներով, մեծ քանակութիւններով ստանում է Յունաստանից, նոյն իսկ Ամերիկայից և Աւստրալիայից քիչմիչ, որից դարձեալ գինի է պատրաստում: Եւ ինչու Գանձակը չէ կարող մատակարարել նրան գինի, քանի որ վերոյիշեալ երկիրներից առաւել մօտ է Եւրոպային:

Համարձակվում եմ խորհուրդ տալ գանձակեցիներին առանց ժամանակ կորցնելու իրագործել իրանց այդ բարի դիտաւորութիւնը, ուշադրութիւն չը դարձնելով ոչինչ խոչնդոտներին, համոզված լինելով, որ նորանք երբէք վնասվելու չեն այդ գործի մէջ, այլ, ընդհակառակն, կը խանգարեն ուրիշներին ծախել իրանց գինիները կեղծ անունների տակ: Յուսանք մի և նոյն ժամանակ, որ կովկասեան Գիւղատնտեսական ընկերութիւնը համակրութեամբ կը վերաբերվի դէպի այդ նորածին ընկերութիւնը և կը խրախուսի Գանձակեցիներին իրանց դիտաւորութեան մէջ, ուշադրութիւն չը դարձնելով մի քանի անիրաւացի պատճառներ բերող հակառակորդների խօսքերին, եթէ միայն դրանք երևան կը գային, Գանձակի գինեգործական ընկերութեան դէմ:

Երևան. Գ. Խարազեան

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՅՈՐԵՆԻ ԱՌԵՒՏՈՒՐԸ *).

—

Մեռաքսի, բրդի, նաֆթի և ուրիշ մի քանի նիւթերի հետ միասին, Անդրկովկասը սկսել է արտահանել, զլխաւորապէս դէպի արտասահման, և ցորեն: Յորենի արտահանութեան առևտուրը հաղիւ

*) Ա. Արասխանեանցի զեկուցումից, կարդացված Գիւղ. ընկ. ժողովում նոյեմբերի 26-ին:

ձտեանց Գարեգին եպիսկոպոսի համար: Այդ եպիսկոպոսը լաւ կը ճանաչէ այդ կողմերը: Մշոյ Առաջնորդութեան կուզեն միացնել Մշոյ Ս. Կարապետի մեծ և կարևոր վանքի վանահայրութիւնը և երկու պաշտօնները յանձնել միասին Գարեգին եպիսկոպոսին:—Այս մասին տակաւին որոշում մը չէ տրուած և Պատրիարքն ու Քաղաքական ժողովը կը մտածեն: Նուրեան էֆէնդիի կարծիքն է որ Սրուանձտեանցի, Օրմանեանի նման եպիսկոպոսներու գործունէութեան ասպարէզն ողբան կարելի է ընդարձակելու է: Մօտակայ մի քանի վիճակներու առաջնորդութիւնն ալ պիտի յանձնուի Օրմանեան եպիսկոպոսի:

—

Ուրիշ փորձանք մ'ալ Պատրիարքարանի համար է «Տիվրիկի վաղքֆներու խնդիր» ըսուածը, որ այս օրերս վճռուեցաւ Թրքաց կրօնական դատարանէն Պատրիարքարանի անմպատ կերպով և Պատրիարքը բողոքեց: Ինչպէս Կարկուրի դատին մէջ, նոյնպէս այս խնդրոյն մէջ բողոքել իսլամական կրօնային ատեանի մը դէմ բաւական տխուր գործ է քրիստոնեայ հոգևոր իշխանութեան մը կողմանէ:

Տիվրիկի այդ խնդիրն հետևեալն է, և այս անգամ երկու կողմանէ դատ վարողներն հայեր են:

Անցեալ դարու մէջ Տիվրիկցի հայ մը կը կտակէ կարևոր գումար մը ի նպաստ իր քաղաքին: Կտակը կը տրամադրէ որ կտակուած դրամին տոկոսը գործածուի Տիվրիկի կամուրջին պահպանութեանը, Տիվրիկ դպրոցին և Տիվրիկի քաղաքին քահանայներուն: Այս կտակը լաւ գործադրելու համար այն ժամանակ կընտրուի Մասնաժողով մը Տիվրիկցիներէ բաղկացեալ «դաբամաճի եսնաֆ» ըսված դասէ տասներկու անձէ: Այս անօրէն ժողովոյ ձեռօք կտակը կը գործադրուի: Բայց կը հասնի ժամանակ մը ուր կը վերցուի—պէտք մը չը մնալով—«Դաբամաճի եսնաֆի» դասը. և այն ժամանակէ վերջ հաստատուելով նաև մեր Սահմանադրութիւնը Պատրիարքարանին իրաւունքը կըլլայ հայոց հոգևոր կտակներու գործադրողը լինել: Հին ատենը կայ եղեր «միթէվելլիութիւն» այսինքն փոխանորդութիւն. այնուհետև Պատրիարքարանը կըլլայ փոխանորդ կտակներու և այս օրինակ ուրիշ գործոց մէջ: Հետևաբար Պատրիարքարանը ինքը կը ստանձնէ նաև Տիվրիկի կտակի գործադրութեան պարտքն ու իրաւունքը: Մասնաժողով մը կընտրուի Պատրիարքարանի կողմանէ բաղկացեալ մեծ մասամբ (կամ ամբողջապէս, լաւ չեմ գիտեր) Տիվրիկցիներէ և որոյ հոգը կը լինի կտակի գործադրութիւնը:

Այս միջոցիս խնդիր մը կը ծագի: Կտակեալ գումարին համար կըսեն թէ այժմ մօտ 250,000 ռուպլի կը լինի և տարեկան հասոյթը կը լինի գրեթէ 25,000 ռուպլի: Պատկառելի գումար մը Տիվրիկի համար: Բայց այդ գումարն հարկ չը կայ այժմ յատկացնել իւր երեք նպատակին: Բանի որ կառավարութիւնը կը հոգայ կամուրջին պահպանութիւնը, ուրեմն ինչ հարկ այլ ևս անհատական կտակի մը. ուրեմն ամբողջ գումարը կը գործածուի դպրոցին և եկեղեցւոյն համար:

Այս գումարը կը մնայ «քաղաքացիներուն» ձեռքը: Դպրոցը նախանձելի դպրոց մը չէ և կը տակէն տոկոսներն աւելի օգուտ կընծայեն անհատներու քան թէ դպրոցի և եկեղեցւոյ: Տիվրիկի «զիւղացիները» կը պահանջեն հիմա որ այդ կը տակի հասոյթէն գիւղերու ալ բաժին ելնէ քանի որ կամուրջի համար բան մը չը յատկացուիր: Բաց ասած կտակին հասոյթը որ այժմ չատցած է—քաղքին պէտքերուն բաւականէն աւելի է:—Պատրիարքարանը գիւղացիներու կողմն է և մանաւանդ կուզէ որ կտակին հասոյթը գործածուի օգտակար կերպով և ոչ թէ անհատներու քսակները պարարտացնէ: Բայց քաղաքացի էֆէնդիները չեն հասկնար այս լեզուէն: Անձնական շահերը վտանգի ենթարկուած լինելով, քանի մը անձինք կը սկսեն պատերազմել պատրիարքարանի դէմ: Հաչուէտետրներն և ամէն ինչ կը պահեն: Խել մը խառնակութիւններ տեղի կունենան: Տիվրիկի քաղքցիներու կողմանէ մի ֆէս ծախող Ծովիկեան անուն անձ փոխանորդ կը կարգուի, փաստաբան կը վարձեն, և Շեյխ-կրօնային ատեանի առջև դատ կը բանան:

Կերևի թէ կրօնային ատեանը չուզեր ճանաչել Սահմանադրութեամբ ազգին ունեցած իրաւունքները, և նկատելով նաև որ կտակին մէջ կամուրջի խնդիր կայ—ինչ որ հոգևոր գործ չէ—վճիռ կարձակէ ընդդէմ Պատրիարքարանի: Պատրիարքարանի զայրոյթն և յուզումը մեծ կըլլայ: Բողոքներ տեղի կունենան, տեսնենք խնդիրը ինչպէս կը վերջանայ:

—

Պատրիարքարանի բողոքները կը շատնան: Բողոքներ ահա խժդժական գործի մը մասին որ կը կատարուի ի Բալու և զոր հետևեալ կերպով կը համառօտէ «Արեւելք»:

«Բալուէն և շրջակայ քաղաքներէն խմբագրութեանս հասած նամակներ կը հաղորդեն խժդժական սոսկալի դէպք մը որ հոկտ. 19-ի շաբաթէն կիրակի լուսնալու գիշերը տեղի ունեցեր է քաղաքին մէջ: Պէրպէր Դրիգոր անուն երիտասարդ ազգային մը և իւր կինը Մարիամ, շաբաթ գիշեր ժամ վեցին ատենները ընդոստ կարթնան դրան զարնուած հարուածներէ: Այր և կին միանգամայն «ով էք» կը գոչեն. սակայն նոյն հետայն հինգ զինեալ չարագործներ դուռը խորտակելով ներս կը խուժեն: Չարագործաց մին կը նստի կնոջ գլխուն վրայ, երկուքը կը բռնեն զԴրիգոր ու կը պահանջեն ցոյց տալ իւր գանձուն տեղը, մահու սպառնալիքներ: Հէդ երիտասարդը կաղաչէ պաղատագին որ խնայեն իւր կենաց և կըսէ թէ ինք գանձ չունի, թող առնուն տանին իւր տան մէջ գտնուած ամեն ինչ: Չարագործք վերսին կը պնդեն և տեսնելով որ իրենց սպառնալիք արդիւնք մը չեն ունենար, չարաչար կը սպանանեն զԴրիգոր, հինգն ի միասին քստմնելի վայրագութեամբ կը բռնաբարեն կնոջ պատիւ՝ մահամերձ վիճակի մէջ թողնելով զայն, և տնական ամեն ինչ առնելով կը մեկնին: Կինը ժամ մը վերջ ուշաբերելով սողալով և արիւնաթաթախ կը դիմէ դէպի դուռն և օգնութիւն կը կոչէ լալագին ձայնով: Դրացիք կը հասնին լապտեր ի ձեռին և հարկ եղած դարմանները կը տանին հէգ կնոջ նոյն հետայն: Առաւօտուն, եկեղեցեաց զանգակները կը սկսին հնչել տխրանուագ, ամեն ոք կիմանայ եղելութիւնն, հասարակութիւնը կը հաւաքուի ազգային վարժարանն, և լուր կը տրուի կառավարութեան: Քաղաքին հայ բնակիչք, ամբողջ չորս-հինգ օր կը փակեն իրենց խանութներն և կուզեն Դրիգորի դիակը տանիլ մինչև ի Տիգրանակերտ, բայց Բալուի Գեր. Առաջնորդն և Քաղաքական Ժողովոյ անդամք աւելորդ կը համարին այսպիսի ցոյց մը, և հարկ եղածն իսկոյն կը տեղեկագրեն Կուսակալին և Ս. Պատրիարք Հօր:»

—

Այս պահուս, ինչպէս արդէն գրած եմ, անտես չեն անցնիր զանազան օդտակար խնդիրներ: Արուեստանոցի մը բացման համար Յանձնաժողով մը ընտրուեցաւ: Աղջկանց Արուեստանոցի մը բացման համար պարահանդէս մը տալ որոշուեցաւ: Պ. Կարապետ Իւթիւճեան (նախկին խմբագիր «Մասիսի») ընտրուեցաւ ընդհանուր Տեսուչ Պոլսոյ դպրոցներուն: Թեմական տեսուչի պէս բան մը:

Այս և սոնց նմաններու մասին յաջորդ նամակաւ:

Հայկակ

երկու տարի է, որ սկսված է, և չը նայած ժամանակի այդպիսի կարճատևութեանը, այդ առևտուրը արդէն մեծ նշանակութիւն է ստացել։ Ցորենի առևտուրը կապված լինելով գիւղական տընտեսութեան հետ, մեծ ազդեցութիւն ունեցաւ Անդրկովկասի մանաւանդ այն տեղերի վրա, որտեղ աղգաբնակութեան համար ցորենի մշակութիւնը գլխաւոր պարապմունք է դարձել։ Մի քանի հանգամանքներ մեծ կապ ունեն ցորենի առևտուրի զարգացման հետ,—ինչպէս Անդրկովկասեան երկաթուղին, ու Բաթում և Փոթի նաւահանգիստները, որոնք երկաթուղու գծով կապված են ցորենի առևտուրի կենտրոնների հետ։ Ցորենի գինը սկսեց նկատելի կերպով բարձրանալ։ Մեր ցորենի առևտրի ապագայի համար երկու հանգամանք մեծ ազդեցութիւն և նշանակութիւն կարող են ունենալ,—դոցանից առաջինը թէև կողմնակի կերպով,—այդ Հնդկաստանի ցորենի զօրեղ մրցումն է եւրոպական հրապարակների վրա, իսկ միւսը, և աւելի կարևորը, որ կարող է լաւ ազդեցութիւն ունենալ մեր ցորենի գնի վրա, այդ Անդրկովկասեան երկաթուղու ցանցի մեծացնելն է, այլ և երկաթուղային տարիֆների փոփոխութիւնը, այսինքն քչացնելը։ Հասկանալի է, որ ինչքան աւելի կը շատանան երկրի մէջ հաղորդակցութեան կանոնաւոր ճանապարհները, այնքան էլ շատ տեղեր, և այնքան էլ մեծ ժողովուրդ կարող կը լինի մասնակցել ցորենի առևտրին անմիջապէս։ Այդ առևտրի առաջին չարժումները առիթ տուին գիւղացիներին տարիներով ամբարած ցորենը հրապարակ դուրս բերելու։ Վերջին երկու տարվայ ընթացքում ցորենի արտահանութեան չնորհիւ մեր գիւղացիների ձեռքն անցաւ աւելի քան 3,200,000 ռուբլի փող։ Ցորենի միւս մասը, որ չէ արտահանվում, գործածվում է Անդրկովկասեան քաղաքներում, տեղական զօրքի և գիւղական այն դասակարգի համար, որը ցորենի մշակութեամբ չէ պարապում։ Դոցա բոլորի գործածած ցորենը տարեկան հաշուում է 3,160,000 պուդի։ Հաշուելով այդ բոլորը միասին դուրս է գալիս, որ վերջին երկու տարվայ ընթացքում գիւղական դասակարգի ձեռքը անցել է ցորենի առևտրի չընորհիւ աւելի քան չորս միլիոն ռուբլի։ Այդ փողը տարածվել է գլխաւորապէս Անդրկովկասեան երկաթուղու գծի ուղղութեամբ գտնվող կէտերում, նամանաւանդ Հիւանիսլի և Աղստաֆա կոչված կայարանների մէջ եղած տեղերում։ Այդ գումարը, ի հարկէ, մեծ ազդեցութիւն ունեցաւ ներքին առևտրի վրա, մանաւանդ գիւղացիների ունեցած պարտքերը վճարելու համար։

Ինքն ըստ ինքեան պարզ է, որ տնտեսական կեանքի համար այդպիսի մեծ նշանակութիւն ունեցող խնդրի ներկան և ապագան լուրջ ուսումնասիրութեան արժանի է։ Ցորենի առևտրի ուսումնասիրութիւնը պէտք է պարզի հետևեալ հարցերը. 1) ցորենի և այլ հացահատիկների արտահանութիւնը. 2) այն քաղաքները և երկիրները, որտեղ ուղարկվում է մեր ցորենը. 3) Փոթիից և Բաթումից արտահանած ցորենի քանակութիւնը. 4) ցորենի արտահանութեան կերպը. 5) արտահանութեան ժամանակը. 6) ցորենի առևտրի սկզբնաւորութեան պատմութիւնը. 7) ովքեր են եղել և ինչ դեր են կատարել Բաթումից և Փոթիից ցորեն արտահանող միջնորդները. 8) ցորենի ներքին առևտրի միջնորդները. 9) թէ որ գաւառը որքան ցորեն է արտահանել. 10) ցորենի տեսակները. 11) մեր ցորենի առաւելութիւնները. 12) վերջին երկու տարվայ ընթացքում ցորենի գինը ներքին հրապարակների վրա. 13) ցորենի տեղափոխութեան ծախքը. 14) Բաթումի և Փոթիի մէջ պահեստների խնդիրը. 15) միջազգային առևտրի հրապարակների պահեստների հարցը և 16) թէ որքան անդրկովկասեան երկաթուղին բաւարարութիւն է տալիս մեր երկրի ցորենի առևտրի և այդ առևտրի մէջ մասնակցութիւն ունեցող անձանց։ Այդ հարցերի պարզելուցն է կախված անդրկովկասեան ցորենի առևտրի նշանակութեան և դրութեան պարզելը։

Ինչպէս վերևում յիշեցինք, ցորենի առևտուրը մեծ չարժում է ստացել վերջին երկու տարվայ ընթացքում։ Դրանից առաջ ցորեն առնում էին գլխաւորապէս թագաւորական կապալառուները։ Թէ մեծ և թէ փոքր դրամատէրերը ուշադրութիւն չէին դարձնում ցորենի առևտրի վրա, իբրև մի անօգուտ ձեռնարկութեան վրա։ Ուշադրութեան արժանի առաջին փորձը եղաւ 1884 թ-ի նոյեմբերին Բաթումի հայերի և մի քանի յոյների ձեռքով, և արդէն 1885 թ-ի սկզբներին նկատելի կենդանութիւն սկսվեցաւ Բաթումում ցորենի առևտրի մէջ։ 1885 թ-ի մարտ ամսին, Փոթիից առաջին անգամ դուրս ղրկվեցաւ մինչև 6000 պուդ ցորեն. իսկ նոյն թ-ի ապրիլին Բաթումից դուրս գնաց արդէն 56,376 պուդ ցորեն դէպի արտասահման։ Դրանից յետոյ ցորենի արտահանութիւնը թուլանում է։ 1885 թ-ի նոյեմբերից կրկին ըսկսվեցաւ մեծ քանակութեամբ արտահանվել։ Իսկ ներկայ 1886 թ-ի սկզբից, մինչև այժմ, մինչև այսօր, ցորենի արտահանութիւնը թէ Բաթումից և թէ Փոթիից աճելով աճում է։ 1885 թ-ի ընթացքում Փոթիից և Բաթումից արտահանված է 681,595 պուդ ցորեն։ Նոյն թ-ականի ընթացքում Փոթիից արտահանված է 258,733 պուդ դարի, իսկ Բաթումից՝ 8,553 պուդ գարի։ Անդրկովկասեան ցորենը թէ Փոթիից և թէ Բաթումից արտահանված է հետևեալ երկիրները. 1) Թիւրքիա, 277,775 պուդ. 2) Ֆրանսիա, 139,145 պ. 3) Մեծ-Բրիտանիա, 90,970 պ., 4) Իտալիա, 67,900 պ., 5) Աւստրիա, 42,400 պ. 6) Գերմանիա, 42,400 պ., 7) Սպանիա, 9,515 պ. 8) Բոլգարիա, 9,100 պ., 9) Յունաստան, 4,300 պուդ։

Բաթումից ցորեն արտահանված է ներկայ 1886 թ-ի յունվարին՝ 105,600 պուդ. փետրվարին՝ 71,050 պ., մարտին՝ 143,550 պուդ. ապրիլին՝ 64,500 պուդ. մայիսին՝ 243,000 պ., յունիսին՝ 40,000 պ., յուլիսին՝ 215,000 պ., օգոստոսին՝ 89,700 պուդ. սեպտեմբերին՝ 428,000 պուդ. հոկտեմբերին՝ 180,000 պուդ։ Ընդամէնը, մինչև ներկայ նոյեմբերի 1-ը Բաթումից արտահանված է 1,680,600 պուդ։

Փոթիից, 1886 թ-ի յունվարից ցորեն արտահանված է հետևեալ չափով. յունվարին՝ 109,190 պուդ, փետրվարին՝ 87,760 պ., մարտին՝ 212,323 պուդ, ապրիլին՝ 175,455 պուդ. մայիսին՝ 253,740 պուդ. յունիսին՝ 450,868 պ., յուլիսին՝ 294,680 պ., օգոստոսին՝ 153,716 պ., սեպտեմբերին՝ 368,163 պ., հոկտեմբերին՝ 100,000 պ.։ Ընդամենը արտահանված է Փոթիից՝ 2,315,000 պուդ ցորեն։ Այդպիսով, թէ Բաթումից և թէ Փոթիից, 1886 թ-ի յունվարից մինչև այս անցեալ հոկտեմբերի վերջը արտահանված է 3,995,600 պուդ ցորեն, այսինքն մօտաւորապէս չորս միլիոն պուդ։

Ուրեմն, ինչպէս վերոյիշեալից երևում է, անցեալ 1885 թ-ի ընթացքում Բաթումից և Փոթիից արտահանված է ընդամենը 681,595 պուդ ցորեն, և այդ թիւը 1886-ին հասնում է արդէն չորս միլիոնի։ Այդ թիւերը արդէն իրանք բաւական պերճախօս են։

Իսկ թէ արդեօք կը շարունակի այդպիսի յաջող ընթացք ունենալ Անդրկովկասի ցորենի առևտուրը, և թէ արդեօք ինչ կը լինի նրա մօտիկ ապագան,—այդ մասին առիթ կունենանք խօսելու մի ուրիշ անգամ։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Հրատարակված է հետևեալ Բ ա ր ձ ր ա գ ո յ ն հրամանը. «Արձակելով Էջմիածնի հայ-լուսաւորչական սինոդի անդամ Մեսրոպ եպիսկոպոս Սը մբ ա տ ե ա ն ի ն իր պաշտօնից, Ամենաողորմածաբար հրամայում ենք Նրան լինել Շամախու թեմի առաջնորդ, Ղարաբաղի թեմի ժամանակաւոր-կառավարիչ արքեպիսկոպոս Գրիգոր Ս ա դ ի ն ե ա ն ց ի ն՝—լինել Նախիջևան-Բեսարաբիայի թեմի առաջնորդ, իսկ եպիսկոպոս Կարապետ Ա յ վ ա զ ե ա ն ի ն՝—առաջնորդ Ղարաբաղի թեմի։ Աստրախանի թեմի կառավարիչ Սուքիաս եպիսկոպոս Պ ա ր ղ ե ա ն ց ի ն՝ արձակելով այժմեան պաշտօնից, հրամայում ենք լինել Էջմիածնի հայ-լուսաւորչական սինոդի անդամ։»

—

Ստացանք Կ. Պոլսից, Գուլամիրեանց ստորագրութեամբ, հետևեալ ցաւալի հեռագիրը։ «Կ. Պոլսի հայոց Արսլանբէգ թաղը բոցերի ճարակ դարձաւ։ Մօտ 5,000 մարդ անապաստան մնացին, ողբալով հրդեհի մէջ իրանց այրված մանուկներին։ Օգնութիւն ենք խնդրում։»

—

Մի հայ երիտասարդ որ ուսանում է Շվէյցարիայի Ժընէվ քաղաքում, խնդրում է մեզ տպել հետևեալը։ «Ահա մօտաւորապէս երկու շաբաթ է ինչ թարգմանել եմ հայերէն լեզուով օրիորդ Susanne Cornaz-ի (որ կառավարչուհի է Ժընէվի Շանտպուլէի դպրոցի և մանկական պարտէզի) մի գիրք «Les enfants et leurs amis» վերնագրով։ Բայց չունենալով նիւթական միջոցներ, չը գիտեմ ինչպէս լոյս ընծայեմ այդ գիրքը։ Եթէ գտնվի մի անձն կամ մի ընկերութիւն որ յանձն առնէր իր հաշուով հրատարակել այդ զեղեցիկ գիրքը, թող դիմեն «Մշակի» խմբագրութեանը իմ հասցէի մասին տեղեկութիւն ստանալու համար։ Ահա գրքի բովանդակութիւնը. 1) Արեգակի ճառագայթները, 2) Մատակ էշը և իր որդին, 3) Փոքրիկ բալենի, 4) Ձանձը, 5) Մարգարիտի հատիկները, 6) Մկան ընտանիքի վիճակը, 7) Փոքրիկ դանակը և կոտրած դանակաստ, 8) Հաւերը և բաղերը, 9) Պատռված հագուստ, և 10) Ծիծեռնակներ։ Գիրքը բաղկացած է 130 էջից, ամեն մի էջի վրա 23 տող և ամեն մի տողի վրա 30 տառ։ Կարելի է վստահ ասել որ այդ գրքի նման գիրքը դեռ եղած չէ մեր մանուկների գրադարանում։ Շատ ափսոս եթէ այդ գիրքը անկարելի կը լինի տպագրել և հրատարակել։»

—

Ինչպէս հաղորդում են ռուսաց լրագիրները ՏՎԷՐ քաղաքի բոլոր դպրոցները հրամայված է ժամանակաւորապէս փակել և բոլոր աշակերտներին իրանց ընտանիքներն արձակել, որովհետև այդ քաղաքում տիրում է այժմ սաստիկ կերպով սկարլատինա և դիֆտերիտ։

—

«Новое Время» լրագրի հրատարակիչ Ա. Ս. Սուվորին, ինչպէս հաղորդում են Պետերբուրգի լրագիրները, վերջացրել է մի նոր թատրոնական պիէսա, որի նիւթը վերցրած է Կաղմինա դերասանուհու ողբերգական մահվան դէպքից։ Ցայտնի է որ այդ դերասանուհին ինքն իրան թունաւորեց։

—

ՎԱՐՇԱՎԱՅԻ լրագիրները հաղորդում են որ այս օրերս այդտեղից անյայտացաւ այդ քաղաքի ամենահարուստ առևտրական տների մի ազգէնտ, տանելով իր հետ 100 հազար ռուբլու գումարը։

—

Ռուս լրագիրներից քաղում ենք հետևեալ լուրը։ Նոյեմբերի 9-ին, ժամը 11-ին երեկոյեան Կիև-Խարկով-Ազովեան երկաթուղու գծի վրա կործանվեցաւ ապրանքների մի գնացք։ Ցայտնվում է որ 34 վագոններից 26 վագոններ, որոնք բեռնված էին աղով և ածուխով, խարտ ջարդված, ոչնչացրած են։ Սպանված է գլխաւոր կօնդուկտոր Եաքէնկօ և երկու ուրիշ ծառայողներ։ Դժբաղդութեան պատճառն այն էր, որ գիծը վատ էր նորոգված. ասում են որ գծի կառուցանողները փոխանակ քարեր դնելու այն գերանների տակ, որոնց վրա ամրացրած են լինում բէլսները, ծախսերը պակասացնելու համար՝ կաւ էին դրել, որ թաց լինելով, բէլսները չեղվեցան իրանց սկզբնական դիրքից։

—

Կ. Պոլսից ստացանք «Ընդարձակ Օրացոյց» 1887 թ-ականի, սեփականութիւն Կ. Պոլսի ս. Փրկչի Ազգային հիւանդանոցի. «Օրացոյցին» կցված են և ստատիստիկական մի քանի հետաքրքիր տեղեկութիւններ Պոլսի և Թիւրքաց-Հայաստանի կրթական, բարեգործական, սահմանադրական, ազգագրական և եկեղեցական ու լրագրական կեանքից։ Տպագրած է Պաղտասարեան (Արամեանի) տպարանում։

—

Մի քանի ժամանակ առաջ լուրեր տարածվեցան որ յայտնի դրամատէր Բօտշիլդ մտադրութիւն ունի խառնվել և Անդրկովկասի գինու առևտրի և գինեգործութեան մէջ։ Այդ լուրը այժմ ճշդվում է, և ինչպէս երևում է բոլոր տեղեկութիւններից, Բօտշիլդի ներկայացուցիչը արդէն յարաբերութիւններ է սկսել յայտնի գինեգործ Մուխրանսկու հետ։ Մուխրանսկի և Բօտշիլդ մի քանի միլիոններով են ուզում ձեռք առնել գինեգործութիւնը։ Նրանք մտադիր են թէ խաղողի այգիներ դնել և թէ կապալով վերցնել։ Այդպիսով Բօտշիլդ իր ահագին դրամական ոյժով մուտք է գործում մեր երկրի մի նոր արդիւնաբերութեան մէջ ևս, վտանգ սպառնալով մեր գինեգործներին։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՐԷՅԽՍՏԱԳԸ ԵՒ ԳԱՀԱԿԱՆ ՃԱՌԸ

—

Նոյեմբերի 25-ին տեղի ունեցաւ գերմանական րէյխստագի բացումը։ Բացմանը ներկայ էին անանց թուով պատգամաւորներ, մինչև 80 հոգի, այն էլ համարեա բացառապէս պահպանողականներից։ Ազգային-ազատամիտները, և մինչև իսկ կենտրոնը՝ միմիայն մի քանի ներկայացուցիչներ ունէին րէյխստագի բացման ժամանակ։ Իսկ սոցիալ-դեմոկրատները միանգամայն բացակայ էին։ Դրանց բացակայ լինելու պատճառը երկու էր. ոմանք չը կամեցան ներկայ լինել իրանց կամքով, որովհետև գիտէին որ պէտք է կարդացվի գահական ճառը, դէպի որը իրանք ուրիշ հայեացքներ ունեն, իսկ ոմանք ստիպված էին ներկայ չը լինել, որովհետև այդպիսիները, մինչև հօթն հոգի, բանտարկված են, Ֆրէյբուրգի դատարանի յայտնի վճռի համաձայն։ Ռէյխստագի հանդիսաւոր բացմանը ներկայ չէր ինքը կայսրը։ Գահական ճառը իր մէջ պարունակում է մի քանի նշանաւոր կէտեր,—բայց ընդհանրապէս նրա թողած տպաւորութիւնը լաւ չէ։ Ներկայ քաղաքական խառնակութիւնների ժամանակ, բոլգարական հարցի ներկայ կնճռոտ վիճակի մէջ, և միւս կողմից դերմանական կառավարութեան պատերազմական ուղղութիւնը, ձգտումները և պատրաստութիւնները այնպիսի անորոշ վիճակ են ստեղծել, որ դէթ պատգամաւորները, ժողովրդի ներկայացուցիչները սպասում էին, որ գահական ճառը մի որոշ, և կտրական միտք կը յայտնի իրերի ներկայ դրութեան մասին։ Սակայն թէ պատգամաւորները և թէ ազգը սխալվեցան իրանց սպասելիքների մէջ։ Բիսմարկ դեռ հարկաւոր է համարում անորոշ դրութիւն պահպանել։ Գահական ճառի մէջ առանձին տեղ է տրված զ օ ր ք ի չ ա տ ա ց նելու խնդրին, որի մասին ներկայացրած օրինագիծը սպասում է իր վիճակը ռէյխստագից։ Գահական ճառի մէջ այդ կողմից անբացատրելի հակասութիւններ կան։ Մի կողմից յայտնվում է որ «Գերմանիայի յարաբերութիւնները օտար պետութիւնների հետ խաղաղասիրական են», իսկ միւս կողմից առաջարկվում է հիմնական փոփոխութիւն անել զինուորական օրէնքի մէջ, և «հէնց դալ տարվայ սկզբին չատացնել զօրքի թիւը և պատերազմական բիւդժէտը։» Կառավարութեան այդ դիրքը դէպի ժողովրդեան ներկայացուցիչները ընդհանրապէս դժգոհութիւն է յարուցել։ Աւելացրէք դրա վրա և այն, որ գահական ճառը առաջարկում է աւելացնել մի քանի հարկեր, և ոչինչ որոշ միտք չէ յայտնում բանտրական և սոցիալական քաղաքականութեան մասին,—այն ժամանակ հասկանալի կը լինի թէ ինչ ընթացք կունենայ գերմանական ռէյխստագի պարապմունքը, որի մասին դեռ ռէյխստագի բացվելուց առաջ առիթ ենք ունեցել խօսելու։ Նոյնպիսի անորոշութիւն է տիրապետում և գահական ճառի այն մասերի մէջ, որոնք վերաբերում են արտաքին քաղաքականութեան։ Ռէյխստագի պարապմունքների ապագան շատերի համար մութ է երևում։ Կառավարութեան համար՝ ամենակարևոր խնդիրը զօրքի թիւը շատացնելն է. կառավարութեան այդ ցանկութեան համակրող պատգամաւորների թիւը 130 չէ անցնում, ասել է թէ բոլոր պատգամաւորների միայն $1/3$ մասն է այդ օրինագծի կողմը։ Այդ ուշադրութեան արժանի կէտ է։ Բացի դրանից, գերմանական մի քանի անկախ լրագիրների տուած տեղեկութիւններից երևում է, որ կառավարութիւնը ինքը սպասում է, որ այդ զինուորական օրինագիծը չէ կարող անցնել, պատգամաւորների ներկայ տրամադրութեան և տնտեսական ներկայ ճգնաժամի ժամանակ,—սակայն կառավարութիւնը այդ քայլը անում է, որովհետև ցանկութիւն ունի վերանորոգել ռէյխստագը, որի այժմեան անդամների մեծ մասը մի մեծ և համարեա անխորտակելի ընդդիմադրութիւն են կազմում։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Ֆրանսիական պատերազմական մինիստր, գեներալ Բուլանժէ 200 միլիոն ֆրանկ է պահանջում բազմահարուածեան հրացաններ տալու համար ֆրանսիական զօրքին, քանի որ գերմանական հինգ զօրաբանակներ արդէն զինված են այդ նոր հրացաններով։ Գերմանական պատերազմական մինիստրութիւնը վճռել է ոչ թէ միայն բազմահարուածեան հրացաններ տալ իր զօրքերին, այլ ամեն մի զինուորի համար նոյն հրացաններից երկու երկու հատ պահեստի դնել։ Ֆրանսիայի պատերազմական մինիստրը հաշուում է նաև թէ քանի հարիւր միլիոն ֆրանկի գումար պէտք է խնդրէ կառավարութիւնից ֆրանսիական բերդերը զրահապատելու համար։ Այս դիտաւորութիւնը գլուխ բերելու համար, ոմանց կարծիքով մինչև 500 միլիոն ֆրանկ ծախս կը պահանջվի։ Եղմական մինիստրութիւնը իր կողմից հարկաղրված է գտնել այս ահագին գումարները։

—Ֆրանսիական «Journal de Paris» լրագիրը հաստատում է, որ Նորերումս Գերմանիայի թագաժառանգը տեսակցություն ունենալով Փարիզեան դուքսի հետ, ասեց նրան որ ինքն համաձայն չէ իշխան Բիսմարկի այն կարծիքի հետ, որ պէտք է Եւրոպայի խաղաղութեան համար պահպանել Ֆրանսիական հանրապետությունը։ Թագաժառանգ իշխանը, ընդհակառակն, այն կարծիքի է որ Ֆրանսիայի հանրապետական դաղափարները սպառնում են տարածվել հետզհետէ ամբողջ Եւրոպայում և Ֆրանսիայում միապետության վերականգնեցնելը ամենաամուր դրաւական կը լինի եւրոպական խաղաղութեան համար, մի և նոյն ժամանակ միմիայն միապետական Ֆրանսիան կը կարողանայ կատարելապէս և անկեղծ կերպով բարեկամություն վերահաստատել Գերմանիայի հետ։

—Բերլինից եկած լուրերը ցոյց են տալիս, որ կառավարությունը յոյս ունի զինուորական օրինագիծը ընդունել տալու համար։

—Իրլանդիայից սարսափելի լուրեր են գալիս... Կռիվները, յուզմունքները, խառնակությունները անվերջանալի են։ Նոր փոխարքան, լորդ Լանդոնդերրի, խստություններով է ուզում ճնշել իրլանդացիներին։ Ազգաբնակությունը վրդովված է այն խստությունների պատճառով, որ միանգամից Սալիսբերիի կառավարությունը ձեռք առաւ։ Արդէն արգելվեցան մի քանի ժողովներ և լրագիրներ։ Լուրեր են տարածվում մի քանի յայտնի անձանց ձերբակալության մասին։ Այդպիսով Սալիսբերիի կաբինետը նոր խառնակությունների դուռ է բացանում իր անհեռատես և վնասակար քաղաքականությամբ։

—Մադրիդից գրում են, որ պատգամաւորների ժողովը ընդունեց նաւատորմիղը մեծացնելու օրինագիծը։

—Արտասահմանեան լրագիրները հաղորդում են, որ կոմս Կալնոկիի և իշխան Բիսմարկի մէջ համաձայնություն է կայացել՝ անպատճառ խաղաղ միջոցներով վերջացնել Բուլգարիայի խնդիրը և Բուլգարիայի ու Արևելեան-Ռումելիայի միութեան հարցը։

—Նորերումս ֆրանսիական պատգամաւորների ժողովում հարց բարձրացվեցաւ այն մասին, թէ պէտք է ոչնչացնել Վատիկանի ֆրանսիական դեսպանությունը, որ ուրիշ խօսքով կը նշանակէ կտրել Պապի հետ ունեցած յարաբերությունները։ Զայների փոքրիկ առաւելությամբ միայն մերժվեցաւ այդ միտքը։ Երբ Պապը լսեց այդ բանը, բացականչեց. «Մեծ վտանգ է մերձենում. պէտք է պատրաստ լինել այդ վըտանգաւոր կռուի համար։»

—Որովհետև Հոլլանդիայում սկսեցին արգելել քաղաքներում հրապարակական միտինգները, ուստի միտինգները և ժողովները տեղի են ունենում կենտրոնի մոտիկ գիւղերում։ Ազգային միութեան անդամները վճռեցին մինչև վերջ դիմադրել։

—Բէլգիայից հաղորդում են, որ իշխանությունը արդէն սկսել է գտնել այն մեծ դողությեան մասնակցողներին, որոնք կողոպտեցին Բէլգիայի փոստը, և որի մասին իր ժամանակին հաղորդեցինք։

—Գերմանիայում հրատարակած վերջին առևտրական հաշիները ցոյց են տալիս, որ Գերմանիայում հացահատիկների գործածությունը քչացել է, և այդ գլխաւորապէս այն պատճառով, որ ցորենի ներմուծությունը ենթարկվեցաւ ծանր մաքսերի։ Դրա հակառակ երկրի մէջ սկսեցին աւելի մեծ քանակությամբ գործածել աւելի արժան ուտելեղէններ, որոնք բռնում են հացի տեղ աղքատ դասակարգի համար, ինչպէս գետնախնձոր, զանազան մրգեր և այլն, որոնք 'ի հարկէ աղգաբնակության առողջության վրա ծանր ազդեցություն պէտք է ունենան։ Այդպիսով մաքսերի չատացնելը փոխանակ օգտի, աւելի վնաս է տալիս բանւոր դասակարգին, որին օգնելու համար, իբրև թէ, չատացվեցան արտասահմանի ցորենի մաքսերը։

—Նոյեմբերի 22-ին Միլան թագաւորի դէմ դաւադրության փորձ եղաւ, և ինչպէս հաղորդում են Սերբիայից, դաւադիրները կամեցել են բռնել թագաւորին։

ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլսի հայոց Միացեալ ընկերությունը, ինչպէս երևում է Պոլսում հրատարակած «Ընդարձակ օրացոյցի» տուած տեղեկություններից, Հայաստանում ունի 33 վարժարան։ Այդ վարժարանների աշակերտների թիւն է 2,828, իսկ պաշտօնեաների թիւը 124։ Բացի Միացեալ ընկերությունից, Պոլսի մէջ կան հայոց հետևեալ կրթական ընկերությունները։—Ազգանուէր Հայուհեաց ընկերություն, ունի օրիորդաց դպրոցներ Գալաթիոյ, Հաճըն, Մուշ, Երիզա և Աղերտ։ Դպրոցասէր տիկնանց ընկերություն, ունի Օրթաքէյում մի վարժարան, որտեղ ուսուցչուհիներ են պատրաստում Հայաստանի գաւառների համար։ Բարեգործական ընկերություն. ունի վարժարաններ գաւառներում՝ Միացեալ ընկերության հսկողության ներքոյ։ Թիզանու Ազգասիրաց ընկերություն, ունի նախակրթարաններ Թիզանու գաւառի մէջ։ Ասիական ընկերություն, ձրիաբար գրքեր է հայթայթում հայաբնակ գաւառների դպրոցներին։ Խնամակալուհեաց ընկերություն։ Ընթերցասիրաց ընկերություն, որը օգնում է աղքատ աշակերտներին։

***

Պոլսում հայերը ունեն հետևեալ պարբերական հրատարակությունները. «Արևելք» ամենօրեայ լրագիրը, «Աւետարեր» շաբաթաթերթը, «Աւետարեր Մանկանց» ամսագիրը, «Բիւրակն» ամիսը երկու անգամ, «Բուրաստան Մանկանց» ամիսը երկու անգամ, «Գիտական Շարժում» ամսագիր, «Երկրագունտ» ամսագիր, «Թերճիմանը Էֆքեար» տաճկերէն լեզուով եռամսեայ, «Խիկար» գաւեշտական ամսագիր. «Հայրենիք» ամենօրեայ լրագիր, «Հնչակ» տասնօրեայ հանդէս, «Ճաշակ Ոսկեղէն Դպրության» գրաբառ ամսագիր, «Ճեբետէի Շարդիէ» տաճկերէն լեզուով լրագիր, «Մանդումի Էֆքեար» ամենօրեայ տաճկերէն լրագիր, «Մասիս» շաբաթաթերթ, «Մէճմուայը Ախպար» տաճկերէն լեզուով ամենօրեայ լրագիր, «Շարժում Գրական և Իմաստասիրական» ամսագիր, «Փունջ» շաբաթաթերթ։ Զմիւռնիայում հրատարակվում է «Արևելեան Մամուլ» ամսագիրը և Այնթապում՝ «Մինասը» տաճկերէն լեզուով։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՍՕՖԻԱ, 21 Նոյեմբերի։ Հաստատում են, որ իբրև թէ Գաղբան-էֆէնդին յայտնեց բուլգարական կառավարությանը որ Բ. Դրան յաջողվեցաւ բուլգարական ազգային մեծ ժողովի վճիռը իսկական համարել տալ այն պայմանով, որ Բուլգարիայում կազմակերպվի խառն մինիստրություն, և որ բուլգարական իշխան նշանակվի իշխան Մինգրելսկին։ Բուլգարական կառավարությունը իբրև թէ պատասխանել է, որ ինքը պատրաստ է զոհել ամեն մի անձնաւորություն, բայց խնդրում է, որ իշխան նշանակվի մի այնպիսի անձն, որի ընտրությունը Ազգային մեծ ժողովի կողմից ապահով լինի,—բայց այդ չէ կարելի ասել իշխան Մինգրելսկու վերաբերությամբ։

ԺՈՒՐԺԵՎՈ, 26 Նոյեմբերի։ Սոֆիայից եկած տեղեկություններից երևում է, որ տեղական բերդապետ մայոր Պոպով մի այնպիսի անսահման ազդեցություն ունի բուլգարական կառավարիչների վրա, որ դարձել է ինքնակամ կարգադրիչ։ Պոպովը իշխան Բատենբերգի արբանեակ և կոյր համակրողն է։

ՎԻԵՆՆԱ, 26 Նոյեմբերի։ Այսօր, կէսօրվայ ժամի երեքին, կոմս Կալնոկի ընդունեց բուլգարական պատգամաւորությունը, որ այստեղ կը մնայ մինչև չարաթ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 Նոյեմբերի։ Գէորգեան տօնը կատարվեցաւ սովորական կարգով Ձմեռային պալատում. տաւաւտեան տեղի ունեցաւ Բարձրագոյն եկեղը, հանդէսը և մաղթանք։ Ժամերգությունից յետոյ գաւիթներում ճաշ տրվեցաւ այն զինուորներին, որոնք ստացել են զինուորական օրդէնի նշաններ։ Թագաւոր Կայսրը մոտենալով սեղանին, վերցրեց բաժակը և ասեց. «Մեր փառաւոր զինուորական չքանչանի ասպետների կենացը, և ձեր կենացը, տղերք, ուրա»։ Երեկոյեան, Նիկոլաևեւեան դահլիճում տեղի ունեցած ճաշի ժամանակ թագաւոր Կայսրը բաժակ առաջարկեց Գէորգեան չքանչանի ամենահին ասպետի, Վիլհելմ Կայսրի և Գէորգեան բոլոր ասպետների կենացը։

ՓԱՐԻԶ, 27 Նոյեմբերի։ Մինիստրական ճգնաժամը դեռ չէ անցել. նոր կաբինետի կազմակերպությունը, ինչպէս երևում է, կը յանձնվի պալատի նախագահ Ֆլոկէին։

ԲԵՐԼԻՆ, 28 Նոյեմբերի։ Երէկ պարլամենտական յանձնաժողովը սկսեց քննել գերմանական զորքի թիւը աւելացնելու նախագիծը։ Պատերազմական մինիստրը ապացուցանում էր, որ անհրաժեշտ է քուէարկել օրէնքը մինչև նոր տարին, որպէս զի նրա գործադրությունը կարելի լինէր ապրիլի 1-ից սկսել։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կիրակի, 30-ին Նոյեմբերի, առաւաւտեան 11 ժամին, քաղաքային տան դահլիճում տեղի կունենայ Կովկասեան Հայոց Բարեգործական ընկերության ընդհանուր ժողովը։ Պարապմունքի առարկաներն են։ 1) 1885 թուականի ընդհանուր հաշվի հաստատությունը։ 2) Ընտրություն՝ ա) ընդհանուր ժողովի նախագահի և քարտուղարի առաջիկայ տարեշրջանի համար. բ) Խորհրդի 5 անդամի և 5 փոխանդամի։

1—1

Նոյեմբերի 27-ին գիշերը, երկարատև ու ծանր հիւանդությունից յետոյ վախճանվեցաւ Վասիլ Մովսիսեան Շահվերդեան։ Յուղարկաւորությունը տեղի կունենայ կիրակի, Նոյեմբերի 30-ին, առաւաւտեան 10 ժ., իր բնակարանից, որ գտնվում է Միքայելեան փողոցի վրա, տուն № 122, դէպի Կուկիայի Թանդոյեան ս. Աստուածածնի եկեղեցին։

1—1

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

(N. PAQUET ET COM.)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկություն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ.

Չորեքշաբթի, դեկտեմբերի 10-ին, ԱՐՄԵՆԻԱ (ARMÈNIE) շոգենաւը, նաւապետ ՇԵՕԼՏ (SCHEULT) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսոն, Կ. Պոլիս և Մարսէյլ։ Տեղեկությունների մասին պէտք է դիմել ընկերության գործակալներին. Բաթումում պ. Գարանիօնին և Թիֆլիսում պ. Բէնօին, Նախկին Արծրունի գալերէում, № 103.

2—4

Թիֆլիսում վաճառվում է կենտրոնական գրավաճառանոցում։ Զատարարաքացիք դիմում են ուղղակի այս հասցեով՝ Въ ТИФЛИСѢ, въ типографіи канцеляріи Главноначальствующаго, Сергѣю Симоновичу Назарову.

15—15

ԷՄԻՆ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ

ԶՐԿԱՆՔԻ ԶՈՂ

Դրամա 4 գործողությամբ.

Վաճառում են 80 կոպէկով Թիֆլիսի գրավաճառանոցները և Երևանում հեղինակը։

7—10

ԿՕՓԷ ՄՕԿԿՕ

Ս. ՍԻՈՒ և ԸՆԿ.

(Щ. 4907) 37—50 (2)

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՅԼՏՈՒԹԻՒՆ ՏՎԱԾ

ՀՆԴԿԱԿԱՆ ՄԿՆԴԵՂ

ՄԻՇՈՒՆԱՅ

ՄԵԾ ԵՒ ՓՈՔՐ ՄԿՆԵՐԸ կատարելապէս ոչնչացնելու համար։ Արկղիկի գինը 1 ր. 50 կ. Արկղիկի 1/4 արժէ 60 կ.։

Հեղուկ բազլինչների դէմ։ Սրուակի գինը, վրձինով միասին 1 ռուբլի։

Լու, ցեց, բողոճ ոչնչացնելու փոշի։ Դարակի գինը 1 ռ. 20 կ. գուտապէրչի մեքենան առանձին. 1/2 դարակ 65 կ.

Սմբակային օծուն, Բիս Գուտմանի, ձիերի սմբակները ամեն օր օծելու համար, պահպանում է սմբակը ճաքելուց և նալելու միջոցին թուլանալուց։ Դարակի գինը 1 ռուբլի։

Կուղբի ճարպի օծուն, պահում է խոնաւության դէմ և կակուղ դրության մէջ՝ կօշիկները, բոտինները, ձիերի սանձերը։ Գինը 75 կոպ.

Մաղերի ներկ, սև, չագանակագոյն և շէկ։ Մի անգամ ներկված մաղերը իրանց գոյնը պահում են մինչև վեց չաբաթ։ Ներկված մաղերը չէ կարելի զանազանել բնական մաղերից։ Արկղիկը 3 ռուբլի.

Բիս. Գուտման

Գլխաւոր պահեստ ԹԻՖԼԻՍՈՒՄ գտնվում է Վ. Գրիվնակի դեղատան ապրանքների մագազինում, «Լոնդոն» հիւրանոցի տակ, Զուբալովի տանը։

30—100

ԽԱՐԿՕՎ ՐԻԲՆԱՅԱ ՓՈՂՈՑՈՒՄ ՐՈՒՖՖԻ ՕՏԵԼՈՒՄ ՆՕՄԷՐՆԵՐ ԵՒ ՐԵՍՏՕՐԱՆԸ

ՆՈՐԻՑ ՇՔԵՂ ԿԵՐՊՈՎ ԶԱՐԴԱՐՎԱԾ ԵՆ։

Նոմէրները 75 կոպ.—5 ռուբլի։ Ամենայն յարմարություն։ Խոհանոցը Մոսկվայի Երմիտաժ Բեստորանի հմուտ խոհարարի ձեռքումն է։ Բեստորանում կայ Օրքէստրիոն-Մոնստր։

Տասն օրից աւելի մնացողներին անում են զիջումն (բացի տօնավաճառների միջոցին)։ Նոմէրների գները շատ մատչելի են։

Kharkow. Hôtel Rouff.

8—10

ՄԻ ՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉ

Որ աւարտել է Ներսիսեան դպրոցը, և ՔՍԱՆ ՏԱՐԻ ուսուցչություն է արել, ՑԱՆԿԱՆՈՒՄ է ՊԱՇՏՕՆ ՈՒՆԵՆԱԼ ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ։ Կը դասախօսի Հայոց լեզուից և Հայոց լեզուով բոլոր առարկաները։ Հասցէն կարելի է իմանալ „Մշակի" խմբագրատանը։

3—3

Дозволено цензурою, Тифлисъ 28 Ноября 1886 г. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовская у. д. каз.